

Հավելված՝ Հայաստանի Հանրապետության

Վայոց Ձոր մարզի Եղեգիս
համայնքի ավագանու
19-ր մարտի թիվ 21 Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

(2018-2022թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմել է՝ համայնքի ղեկավար՝

/Ա. ՄՏԵՓԱՆՅԱՆ /

Հաստատվել է համայնքի
ավագանու 19-ը մարտի 2018թ. թիվ
21 Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|---|
| 1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք | 3 |
| 2. Համայնքի իրավիճակի նկարագրություն | 4 |
| 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն | 4 |
| 2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը | 6 |
| 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը | 7 |

| | |
|---|----|
| 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ..... | 8 |
| 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ | 10 |
| 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն | 11 |
| 3. Համայնքի զարգացման նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.12 | |
| 3.1. Համայնքի զարգացման տեսլական | 12 |
| 3.2. Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում..... | 12 |
| 4. ՀԶԾ ֆինանսավորում..... | 18 |
| 5. ՀԶԾ մոնիթորինգ..... | 19 |

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Եղեգիս համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում 2017 թվականի հունիսի 19-ին կատարված փոփոխության արդյունքում: ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքը ստեղծվել է 16՝ Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալի, Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Սևաժայռ, Կալասեր, Գետիկվանք և Արատես գյուղերի (այժմ բնակավայրերի) միավորումից: Համայնքում մշտական ապրում են 6479 մշտական բնակչություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, որից ստացած եկամուտները ոչ բոլոր դեպքերում է ապահովում ապրուստի միջոցները հոգալու համար, ինչն էլ հանդիսանում է համայնքի բնակչության

միգրացիայի աճին: Հետևաբար՝ համայնքում առաջնային անհրաժեշտություն է առաջացել նոր աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքում կան մի շարք խնդիրներ: Ելնելով այդ խնդիրներից, օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների, բարերարների աջակցությունը, համայնքում առաջիկա տարիներին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Ներհամայնքային և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Պատմամշակութային արժեքների պահպանություն
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Զբոսաշրջության զարգացում
- Բնակավայրերում երիտասարդական կենտրոնների և մանկական խաղահրապարակների ստեղծում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Այգեգործության բնագավառում գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում
- Ներհամայնքային ուղևորավորխաղրումների կազմակերպում
- Համայնքում երիտասարդական կենտրոնի ստեղծում
- Նոր աշխատատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում

Համայնքը այժմ համագործակցում է մի շարք պետական և օտարերկրյա ծրագրերի հետ. նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջանակները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես՝ այժմ համայնքը համագործակցում և իրականացնում է ծրագրեր Ռազմավարական զարգացման գործակալության և Հայաստանի տարածքների զարգացման հիմնադրամի հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀՈՐԲԱՏԵՂ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում Հորբատեղ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ հյուսիս, մայրաքաղաքից 136 կմ հեռավորության վրա, Վարդենիսի լեռների հարավային փեշերին, Արտաբուն գետի ափին: Բնակավայրից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում Վայոց Ձորի մարզի մի շարք բնակավայրերին: Բնակավայրը սահմանակից է Արտաբույնք, Եղեգիս, Սալի բնակավայրերի հետ:

Բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 20 կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 7 կմ, պետական սահմանից 37 կմ հեռավորության վրա, ծովի մակարդակից բարձր է 1880 մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +30+35: Բնակավայրի տնտեսական ուղղվածությունն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

ՄԱԼԻ

Սալի բնակավայրը գոյություն է ունեցել շատ հնուց: Այդ մասին կա հիշատակություն Ստեփան Օրբելյանի «Պատմություն Միսական» գրքում, որում հիշատակվում է, որ Գրիգոր Լուսավորիչի հանձնարարությամբ քարոզիչներ են ուղարկվում Հայաստանի տարբեր վայրեր, որոնք իրենց հետ վերցնում են սրբերի մասունքներ և քարոզում են քրիստոնեություն: Հիշատակվում է, որ նրանք իջևանում են Սալի բնակավայրի տարածքում և այդ սրբերից մեկի՝ Սուրբ Մամասի մասունքները հանգրվանում են Սալի բնակավայրում և այնտեղ կառուցվում է փոքր եկեղեցի, որը ներկա պահին ենթակա է վերակառուցման:

Սալի բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի հյուսիս արևմտյան մասում, ծովի մակարդակից 1600 մ բարձրության վրա, մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+38: Հողատարածքները գտնվում են 1400-2850մ սահմաններում: Բնակավայրը մարզկենտրոնից հեռու է 20կմ, մայրաքաղաքից 135կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 5 կմ, պետական սահմանից 35 կմ հեռավորության վրա: Կլիման ունի չոր, կոնտինենտալ բնույթ, հաճախակի կրկնվող երաշտներով, որից էլ խիստ տուժում են գյուղատնտեսական մշակաբույսերը: Ներկայումս բնակավայրի տարածքում բնակվում են 285 բնակիչ: Սահմանակից է Թառաթումբ, Քարագլուխ, Հորբատեղ, Արտաբույնք, Շատին և Հորս բնակավայրերին:

Բնակավայրի տնտեսական ուղղվածությունն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

ՄՂՆՋԱՋՈՐ

Աղնջաձոր բնակավայրը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց ձոր գավառում, այն համարվում է Վայոց ձորի հյուսիսային դարպասը: Նախկինում բնակավայրը ունեցել է Ենգիչա, Դրունք, Աղքյանդ, Լեռնանցք անվանումները: Բնակավայրը վերանվանվել է Աղնջաձոր 1968 թվականին: Սահմանակից է Թառաթումբ, Քարագլուխ բնակավայրերին և Գեղարքունիքի մարզին: Հեռավորությունը Երևանից 138 կմ է, մարզկենտրոնից՝ 23 կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 7 կմ, իսկ պետական սահմանից՝ 37 կմ: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1610 մ է, կլիման չափավոր տաք է և չոր, շոգ ամառներով և ցուրտ ձմեռներով, տեղումների քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+38:

Բնակավայրում է գտնվում Օրբելիների (Սելիմի) քարավանատունը, որը 1332 թվականի կառույց է, Հայաստանի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության եզակի կառույցներից մեկը: Բնակավայրից երեք կիլոմետր դեպի հյուսիս՝ Սելիմից հոսող գետակի ձախ կողմի վրա կա մի կիսավեր քարավանատուն (Փոքր քարավանատուն), ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարում: Աղնջաձորից 4 կմ հյուսիս գտնվում է Կապույտ (Սուլեմա) բերդի ավերակները (IV-XIV դարեր), որը դասվել է Սյունյաց երկրի նշանավոր և անառիկ բերդերի շարքին: Բնակավայրը հարուստ է խաչքարերով (IX-XIV դարեր) և կամուրջներով (XIII-XV դարեր, XVIII-XIX դարեր):

Բնակավայրի տնտեսական ուղղվածությունն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

ՎԱՐՂԱՀՈՎԻՏ

Վարդահովիտ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից 31 կմ հեռավորության, մայրաքաղաքից 147 կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 185 կմ, պետական սահմանից 48 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 2050 մ, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղական համայնքների ցանկում: Բնակավայրը գտնվում է Վայոց ձորի մարզի հյուսիսային մասում, մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 700-800 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -25-30, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +30+32: Վարդահովիտ բնակավայրի մեջ ընդգրկված են նաև Սևաժայռ և Գետիկվանք գյուղերը: Բնակավայրի վարչական տարածքից են սկիզբ առնում Եղեգիս գետի Սևաժայռ (Կարակայա) և Էլեգիս վտակները: Բնակավայրը գտնվելով անտառամերձ գոտում, ունի շատ գեղեցիկ բնապատկեր: Գետիկվանքը նախկինում եղել է Գետիկ ամրոց, այժմ այնտեղ պահպանվել են Հին Գետիկ եկեղեցու (12-17-րդ դար) մասունքները և գերեզմանոցը:

Բնակավայրի վարչական տարածքում առկա են բնական տաք և թթու ջրերի

ակունքներ:

Վարդահովիտ բնակավայրում 1988 թվականից բնակվում են փախստական և մարզի տարբեր գյուղերից վերաբնակեցված երիտասարդ ընտանիքներ, ովքեր իրենց նախկին բնակավայրերում հնարավորություն չեն ունեցել բնակարան կառուցելու, ապրելու, տեղափոխվել և բնակություն են հաստատել Վարդահովիտում:

Բնակավայրի բնակիչները, բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ:

Բնակավայրի տարածքում գործում են երեք ՓՀԷԿ-եր, որտեղ աշխատում են համայնքի շուրջ 30 բնակիչներ: Վարդահովիտ բնակավայրը սահմանակից է Հերմոն և Գողթանիկ բնակավայրերին:

ՀԵՐՄՈՆ

Հերմոն բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի հյուսիս-արևելյան կողմում, մարզկենտրոնից 26 կմ, մայրաքաղաքից 142 կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 13 կմ, պետական սահմանից 43 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1720մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36: Հերմոն բնակավայրը վերաբնակեցվել է 1988թ-ից, բնակիչները հիմնականում նախկին փախստականներն են, ովքեր գաղթել են Ադրբեջանից: Հերմոն բնակավայրի մեջ ընդգրկված են նաև Կալասեր և Արատես գյուղերը: Հերմոնը հիմնականում ապահովված է խմելու ջրով: Հերմոնից է հոսում Եղեգիս գետի վտակները: Բնակավայրի տարածքում են գտնվում 13-րդ դարում կառուցված Հերմոն և Արատես վանքերը: Բնակավայրի տարածքում գործում են 1 խանութ, 4 ՓՀԷԿ, <<Սիրանուշ>> ճամբարը և 1 հանգստյան տուն: Բնակավայրի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը հով: Հաճախակի են չորային, երաշտի տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Բնակավայրի տնտեսական ուղղվածությունն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

ԳՈՂԹԱՆԻԿ

Գողթանիկ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնից հյուսիս-արևելք, Թեքսարի լեռների ստորոտին, Եղեգիս գետի հովտում, մարզկենտրոնից 29 կմ, մայրաքաղաքից 145կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 16 կմ, պետական սահմանից 46 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1850մ:

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 700-750 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -25-30, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +30+35: Բնակավայրը հյուսիսարևելքից սահմանակից է Կարմրաշեն բնակավայրին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ բնակավայրին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Հերմոն բնակավայրին:

Բնակավայրը մինչև 1988թ-ի աշնանը բնակեցված է եղել ադրբեջանցիերով, իսկ 1988թ-ի նոյեմբեր ամսից Ղարաբաղյան պատերազմի պատճառով բռնի տեղահանված փախստականներով բնակավայրը վերաբնակեցվել է հայերով: Բնակավայրը նախկինում անվանվել է «Ղաբախլու», իսկ 90-ական թվականներից բնակավայրը վերանվանվել է «Գողթանիկ» Գողթանիկ անունով բնակավայրը վերանվանվել է այն պատճառով, որ բնակչության 80%ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գողթան գավառի /Օրդուբադի շրջան/ տարածքից: Բնակավայրում կա մի քանի խաչքարեր և քանդված եկեղեցի:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ զով: Լինում են չորային և երաշտի տարիներ, տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է:

Բնակավայրի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում բնակավայրերին:

Բնակավայրի տնտեսական ուղղվածությունն անասնապահությունն է, զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծմամբ: Զբաղվում են նաև պտղաբուծությամբ և մեղվաբուծությամբ:

ԵՂԵԳԻՍ

Եղեգիս բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի հյուսիս-արևելյան կողմում, Եղեգիս գետի աջափնյակում, մարզկենտրոնից 19 կմ, մայրաքաղաքից 134կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 4 կմ, պետական սահմանից 34 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1580մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36: Բնակավայրը հյուսիսարևելքից սահմանակից է Հերմոն բնակավայրին, հարավարևելքից Արտաբույնք բնակավայրին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Շատին բնակավայրին, արևելյան կողմից՝ Գլաձոր և Վերնաշեն բնակավայրերին: Բնակավայրը մինչև 1988թ-ի աշնանը բնակեցված է եղել ադրբեջանցիներով, իսկ 1988թ-ի նոյեմբեր ամսից՝ Ադրբեջանից բռնի տեղահանված փախստականներով: Բնակավայրը նախկինում կոչվել է «Ալյայագ», իսկ 2000-ական թվականներից բնակավայրը վերանվանվել է Եղեգիս: Վերանվանվել է այն պատճառով, որովհետև գտնվում է պատմական Եղեգիս քաղաքի տարածքում: Եղեգիս բնակավայրը հանրապետության բնակավայրերից ամենահարուստն է եկեղեցիներով ու խաչքարերով, բազմաթիվ պատմական կոթողներով, հուշարձաններով, որոնք դեռևս ամբողջովին չեն

ուսումնասիրվել և մեր ժողովրդի համար պատմական նշանակություն ունեցող հարցերին լիարժեք պատասխան չեն տրվել:
Բնակավայրում է գտնվում հանրապետությունում միակ 12-13 դարերի հրեական գերեզմանատունը:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը զով: Լինում են չորային և երաշտի տարիներ, տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Բնակավայրի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում բնակավայրերին: Բնակավայրը ունի շատ գեղեցիկ աշխարհագրական դիրք, որը հնարավորություն է տալիս զարգացնել էկոտուրիզմը:

ԱՐՏԱԲՈՒՅՆՔ

Արտաբույնք բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի հյուսիսային կողմում, Եղեգիս գետի աջափնյակում, մարզկենտրոնից 17 կմ, մայրաքաղաքից 133կմ, համայնքի կենտրոնից ուղիղ գծով 4 կմ, պետական սահմանից 34 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1540մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36:

Բնակավայրի միջով հոսում է Եղեգիս գետի Էլեգիս վտակը: Բնակավայրի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սմբատաբերդ ամրոցը, որը կառուցվել է 12-րդ դարում: Բերդը կոչվել է Սյունյաց տան իշխան Սմբատի անունով: Սմբատաբերդից հյուսիս-արևմուտք գտնվում է Ցախացքար եկեղեցական համալիրը /11-րդ դար/: Բնակավայրում է գտնվում <<Չոխ>> ժամտունը /13-րդ դար/, 9-13-րդ դարերի խաչքարեր:

Բնակավայրի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Բնակավայրը լայն հնարավորություն ունի էկոտուրիզմի զարգացման համար:

ՇԱՏԻՆ

Շատին բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի հյուսիս-արևմտյան կողմում, Եղեգիս գետի ափին, մարզկենտրոնից 13 կմ, մայրաքաղաքից 129կմ, ուղիղ գծով պետական սահմանից 30 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1270մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +36+38: Շատին բնակավայրը հանդիսանում է Եղեգիս համայնքի վարչական կենտրոնը:

Շատինը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Սալմաստ գավառից ներգաղթած հայ ընտանիքներով: Բնակավայրը ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են համայնքում գտնվող վանքերն ու մատուռները: Բնակավայրի տարածքում է գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները, Աղվանք և Բագելիկ եկեղեցիները, Շատիվանք վանական համալիրը, Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները, որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և բնակավայրի այլ տարածքներում գտնվող մատուռները:

Արևելյան կողմից բնակավայրի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմասյուն ճակատները: Բնակավայրի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով՝ նրա երեք վտակների հատման տեղում:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Բնակավայրով է անցնում մարզկենտրոնը տասնմեկ բնակավայրերին միացնող միջմարզային ճանապարհը և դեպի Սևանի ավազան տանող բարեկարգ միջպետական ավտոճանապարհը: Բնակավայրի տարածքում կան հանքային հանածոներ, շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին:

Բնակավայրում առկա (ներառյալ ժամանակավոր) բնակչության թիվը 2018 թվականին հունվարի 1-ի տվյալներով կազմում է 1903 մարդ, մշտական բնակչությունը՝ 1894 մարդ, տնտեսությունների թիվը՝ 672:

ՀՈՐՄ

Հորս բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի արևմտյան կողմում, Մելիմագետի աջ՝ օժանդակ Հորս գետի ափին, մարզկենտրոնից 24 կմ, մայրաքաղաքից 140կմ, ուղիղ գծով համայնքի կենտրոնից 7, պետական սահմանից 37 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1660մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36: Հորսում է գտնվում 13-րդ դարում կառուցված Չեսար իշխանի առանձնատունը, որը անվանում են «Չեսարի դարպասներ», իսկ Վարդենյանց լեռնանցքում գտնվող իջեվանատունը եղել է նույն Չեսարի իշխանի քարավանատունը: Հորս բնակավայրում է գտնվում նաև իշխանական գերեզմանատունը:

Բնակավայրից 4կմ վերև 2016թ. <<Բեզուար>> ՎԲ ՀԿ միջոցներով կառուցվել է տուրիստական տուն, որտեղ տուրիստներ են գալիս տարբեր երկրներից:

Հորս բնակավայրն ունի շատ տեսարժան վայրեր, Հորսի լիճը գտնվում է բնակավայրից 4կմ վերև, Բուրթ մատ կոչվող լեռնաշղթայի ստորոտում, որից անմիջապես հետո սկսվում է Հորսի անտառը: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվապահությամբ և գյուղատնտեսությամբ:

Անասնապահության հիմնական ճյուղը խոշոր եղջերավոր

անասնապահությունն է, իսկ գյուղատնտեսությանը՝ խաղող, ընկույզ, պտուղ: Բնակավայրը էկոտորիզմի զարգացման համար ունի լայն հնարավորություն: Սահմանակից է Թառաթումբ, Աղավնաձոր, Սալլի, Շատին, Ռինդ, Ելփին բնակավայրերին:

ԹԱՌԱԹՈՒՄԲ

Թառաթումբ բնակավայրը գտնվում է մարզկենտրոնի արևմտյան կողմում, Սելիմագետի աջ՝ օժանդակ Թառատուն գետի ափին, մարզկենտրոնից 24 կմ, մայրաքաղաքից 140կմ, ուղիղ գծով համայնքի կենտրոնից 7, պետական սահմանից 37 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1640մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36: Բնակավայրը սահմանակից է Հորս, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր, Ելփին բնակավայրերին, հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին:

Բնակավայրը հիմնադրվել է 1830 թվականին Պարսկահայաստանի Խոյ գավառի Ղորուղ գյուղից գաղթած 10 ընտանիքների կողմից: Բնակավայրը տվել է Հայրենական Մեծ պատերազմի և Սոցիալիստական աշխատանքի մեկական հերոսներ:

Բնակչությունն զբաղվում է այգեգործությամբ, հիմնականում խնձոր և ընկույզ, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ:

Թառաումբում կան X-XII դարի խաչքարեր, սրբավայրեր, մատուռ: Բնակավայրն ունի գործող եկեղեցի, որը կառուցվել է 1896 թվականին: Բնակավայրի տարածքում կան նախկին բնակավայրերի հետքեր:

Քարագլուխ


Վայոց Ձորի մարզի Քարագլուխ բնակավայրը գտնվում է Սելիմագետի ձախ, Քարագլուխ գետի աջ ափին, Վարդենիսի լեռների հարավային լանջերին, մարզկենտրոնից 21 կմ, մայրաքաղաքից 138կմ, ուղիղ գծով համայնքի կենտրոնից 6, պետական սահմանից 36 կմ հեռավորության վրա, ծովի մակերևույթից բարձր է 1650մ: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 650-700 մմ է, օդի դիտված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -20-25, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +35+36: Բնակավայրը սահմանակից է Սալլի, Թառաթումբ, Աղնջաձոր բնակավայրերին, հյուսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին:

2008 թվականին բնակավայրն ուներ 909 բնակիչներ, որոնց նախնիները 1828 թվականին գաղթել են Խոյից և Սալմաստից:

Ներկա պահին բնակավայրում բնակելի տների քանակը կազմում է 185 միավոր: Բնակավայրի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ ռելիեֆի և դրա բնակելի տարածքների համար արտահայտված են հետևյալ տիպերով՝ ցամաքային


չափավոր ցուրտ ձմեռ և տաք ամառ: Բնակավայրում բնորոշ է ուժեղ քամիներ, որոնց հիմնական ուղղությունը հյուսիս-արևմուտքից է:

Բնակավայրի տարածքում առկա են երկաթբետոնյա 5 կամուրջներ: Տարածքում առկա է 1 ջրամբար՝ Յիա մակերեսով և 1.5մլն. խորանարդ մետր տարողությամբ, որի հնարավորությունը չի օգտագործվում, 1 էլեկտրակայան՝ 1մզվ. հզորությամբ: Քարագլուխ բնակավայրում առկա են 6-ից 19-րդ դարերի խաչքարեր, սրբավայրեր, որից ամենահայտնին «Թուխ Մանուկ» մատուռն է: Բնակավայրից 3 կմ հարավ գտնվում մեծագույն սրբերից մեկի՝ Սուրբ Մամասի գերեզմանը և նույնանուն վանքի ավերակները /13-րդ դար/:




Ստորև ներկայացված են բնակչության տարիքային սանդղակը և բնակչության բնական աճը 2015-2018թթ

- մինչև 1 տարեկան
- 1-2 տարեկան
- 3-4 տարեկան
- 5-6 տարեկան
- 7-10 տարեկան
- 11-14տարեկան
- 15-17տարեկան
- 18-22 տարեկան
- 23-45տարեկան
- 46-62տարեկան
- 63-ից բարձր



Բնակչության բնական աճը 2015-2017թթ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՃԸ



Եղեգիս համայնքի գյուղատնտեսական ցուցանիշները


(աղբյուրը՝ պաշտոնական վիճակագրություն)

| Եղեգիս համայնքի բնակավայրեր | Գյուղ Հողեր /հա | Վարել ահող/ հա | Այգի | Մեղվա ընտանիք | Մանր եղջերավոր | Խոշոր եղջերավոր |
|-----------------------------|-----------------|----------------|------|---------------|----------------|-----------------|
| | | | | | | |

| | | | | | | |
|------------|--------|---------|-------|------|------|------|
| Վարդահովիտ | 10488 | 226.9 | --- | 201 | 544 | 321 |
| Հերմոն | 4050.1 | 137.5 | 8.2 | 375 | 120 | 66 |
| Թառաթումբ | 1984 | 40.57 | --- | 377 | 40 | 240 |
| Գողթանիկ | 4759.8 | 297.4 | --- | 348 | 456 | 214 |
| Եղեգիս | 2925.6 | 66.6 | 11.8 | 154 | 385 | 206 |
| Շատին | 3483.6 | 305.08 | 6.09 | 1114 | 90 | 848 |
| Քարազուխ | 2599 | 305.4 | 0.6 | 319 | 365 | 351 |
| Սալլի | 1866.4 | 101.4 | 9.6 | 57 | 987 | 166 |
| Հորս | 2946.3 | 273.4 | 8.8 | 1279 | 215 | 304 |
| Հորբասեղ | 1863.2 | 50.1 | 0.17 | 365 | 90 | 258 |
| Աղնջաձոր | 3169 | 149.7 | 17.5 | 503 | 255 | 372 |
| Արտաբույնք | 3116 | 6.8 | 9.4 | 589 | 22 | 552 |
| Ընդամենը | 43251 | 1960.85 | 72,16 | 5681 | 2404 | 3898 |

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Եղեգիս համայնքի ընդհանուր և սեփական եկամուտների
դինամիկան 2015-2017թթ



Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 170772.1 հազ. դրամ, որից 38932 հազ. դրամը հանդիսանում է համայնքի սեփական եկամուտները::

Եղեգիս համայնքի տնտեսության հեռանկարը ռազմավարական և բարելավվող ճյուղերն են, որտեղ կուտակված է տնտեսական զարգացման պոտենցիալը: Տուրիզմի և այգեգործության զարգացման շուրջ պետք է կառուցվի Եղեգիս համայնքի տնտեսության զարգացման առանցքը: Անասնապահությունը նույնպես զարգացող ճյուղերից է, սակայն կովերի կաթնատվությունը ցածր է հանրապետության միջին ցուցանիշից, մթերման գները ևս ցածր են և չեն ապահովում շահույթաբերություն: Նույնը վերաբերվում է նաև հացահատիկային կուլտուրաների մշակմանը:

Վերջին երկու տարվա ընթացքում համայնքում կատարվող ներդրումների մեծ մասն ուղղվում է դեպի այգեգործություն և պտուղների վերամշակման ոլորտներ: Այստեղ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, տնկիների ավելի արտադրողական տեսակներ:

Եղեգիս համայնքը ունի շատ գեղատեսիլ, հնամյա բնակավայրեր՝ հարակից պատմամշակութային հուշարձաններով, որոնք կարող են մեծ հետաքրքրություն առաջացնել զբոսաշրջության բնագավառում:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

1. 2018-2022թթ Եղեգիս համայնքի բոլոր բնակավայրերում «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացնել գյուղատնտեսության զարգացմանն ուղղված տարբեր ծրագրեր: Նախատեսվում է բոլոր բնակավայրերում իրականացնել անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրեր՝ անասնախմոցների, փարախների, մակատեղերի, հովվի տնակի կառուցում, ինչպես նաև ոռոգման և խմելու ջրագծերի կառուցում և վերանորոգում:

Ծրագիրը հնարավորություն կտա զարգացնել գյուղատնտեսությունը, հիմնել նոր աշխատատեղեր:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմադրամի և Եղեգիս համայնքապետարանի կողմից նախատեսվում է իրականացնել խոշորացված համայնքի զարգացման ծրագիր, որը կնպաստի համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը:

Այն իր մեջ ներառում է

- ✓ Մեքենատրակտորային պարկի ստեղծում
- ✓ Ներհամայնքային և միջհամայնքային ճանապարհների բարեկարգում
- ✓ Ներհամայնքային ուղևորափոխադրումների կազմակերպում
- ✓ Չրերի չորացման արտադրամասի ստեղծում

Ծրագիրը հնարավորություն կտա բարելավել միջհամայնքային և հանդամասային ավտոճանապարհները:

3. ՀՀ Կառավարության և Եղեգիսի համայնքապետարանի համատեղ ֆինանսավորմամբ նախատեսվում է իրականացնել համայնքի արտաքին լուսավորության ծրագիր Շատին և Հորս բնակավայրերում:

Կառավարության և համայնքապետարանի կողմից նախատեսվում է համատեղ ֆինանսավորմամբ իրականացնել Քարազլուխ և Հերմոն բնակավայրերում ոռոգման ջրագծերի անցկացում, որի արդյունքում զարկ կտրվի գյուղատնտեսության, մասնավորապես այգեգործության զարգացմանը:

4. ՎիվաՍել USU-ի օգնությամբ նախատեսվում է Հերմոն բնակավայրում իրականացնել արտաքին լուսավորության անցկացում:

5. Նախատեսվում է սոցիալական ներդրումների հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնել Արտաբույնք և Հորբատեղ բնակավայրերի ասֆալտապատում:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, գույքահարկից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում, սակայն դրանք 2018-2022թթ. փաստացի տվյալներով աճել են:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ**

Աղյուսակ 2. Համայնքի 2018-2022թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2018-2022թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

հազար դրամ

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2018թ. փաստ. | 2019թ. Նախ. | 2020թ. Կանխ. | 2021թ. կանխ. | 2022թ. կանխ. |
|------------|--|-----------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴՂԱՄԵՆԸ (I+II+III)* | 203422.5 | 203916.5 | 204250 | 205000 | 205900 |
| I. | ԸՆԴՂԱՄԵՆԸ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)* | 190616.5 | 190916.5 | 191250 | 191500 | 191900 |
| 1. | ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ | 25700 | 26000 | 26050 | 26150 | 26300 |
| 1.1 | Գույքային հարկեր անշարժ գույքից | 8600 | 8800 | 8800 | 8800 | 8800 |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | | | | | 300 |
| | | 300 | 300 | 300 | 300 | |
| | Հողի հարկ | 8300 | 8500 | 8500 | 8500 | 8500 |
| 1.2 | Գույքային հարկեր այլ գույքից | 16100 | 16200 | 16200 | 16300 | 16400 |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 16100 | 16200 | 16200 | 16300 | 16400 |
| 1.3 | Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ | 1000 | 1000 | 1050 | 1050 | 1100 |
| | Տեղական տուրքեր | 1000 | 1000 | 1050 | 1050 | 1100 |
| 1.4 | Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ | | | | | |
| | Պետական տուրքեր | | | | | |
| 1.5 | Այլ հարկային եկամուտներ | | | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | | | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | | | | | |
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 138416.5 | 138416.5 | 138500 | 138550 | 138600 |
| 2.1 | Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 2.2 | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 2.3 | Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 138416.5 | 138416.5 | 138500 | 138500 | 138600 |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | | | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |

| | | | | | | |
|------------|---|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| 2.4 | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (տուբվենցիաներ) | | | | | |
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 3. | ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ* | 26500 | 26500 | 26700 | 26800 | 27000 |
| 3.1 | Տոկոսներ | | | | | |
| 3.2 | Շահաբաժիններ | | | | | |
| 3.3 | Գույքի վարձակալությունից եկամուտներ | 16500 | 16500 | 16600 | 16700 | 16800 |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 11064 | 11064 | 11100 | 11150 | 11200 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | 5436 | 5436 | 5500 | 5550 | 5600 |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | |
| 3.4 | Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | |
| 3.5 | Վարչական գանձումներ | 1000 | 1000 | 1050 | 1050 | 1100 |
| | Տեղական վճարներ | 1000 | 1000 | 1050 | 1050 | 1100 |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | | | | | |
| | Աղբահանության վճարներ | 9000 | 9000 | 9050 | 9050 | 9100 |
| 3.6 | Մուտքեր տույժերից, տուգանքներից | | | | | |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | |
| 3.7 | Ընթացիկ ոչ պաշտոնական | | | | | |

| | | | | | | |
|-------------|---|--------------|--------------|--------------|--------------|--------------|
| | դրամաշնորհներ | | | | | |
| 3.8 | Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ | | | | | |
| 3.9 | Այլ եկամուտներ* | | | | | |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | | | | |
| II. | ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4) | | | | | |
| 1. | Հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | | | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | | | | | |
| 2. | Պաշարների իրացումից մուտքեր | | | | | |
| 3. | Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| 4. | Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | | | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | | | | | |
| III. | ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ՂԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ) | 12806 | 13000 | 13000 | 13500 | 14000 |
| Ա. | ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2) | | | | | |
| 1. | ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | |
| 2. | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ | 12806 | 13000 | 13000 | 13500 | 14000 |
| 2.1 | Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | | | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ | | | | | |


| | | | | | | |
|------------|---|--------------|--------------|-------|-------|-------|
| | անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | | | | | |
| 2.2 | Փոխատվություններ | | | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | | | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | | | | | |
| 2.3 | Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը | 12806 | 13000 | 13000 | 13500 | 14000 |
| 2.4 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս | | | | | |
| 2.5 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս | | | | | |
| 2.6 | Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում | | | | | |
| | որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը | | | | | |
| Բ. | ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ | | | | | |
| 1. | ՓՈՒՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ | | | | | |
| 1.1 | Արժեթղթեր | | | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | | | | | |
| | -հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.2 | Վարկեր | | | | | |
| | -վարկերի ստացում | | | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | | | | | |
| 1.3 | Փոխատվություններ | | | | | |
| | -փոխատվությունների ստացում | | | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | | | | | |

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

Ստորև ներկայացված է համայնքի սեփական եկամուտների փաստացի տվյալները 2015-2017թթ.:


ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2015-2017թթ



ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

2014-2017թթ



Առաջիկա տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը՝ ի հաշիվ սեփական եկամուտների կանոնակարգված հավաքագրման: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

1) գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման գործոնի բացակայությունը

Համայնքի գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման զարգացման խոչընդոտները, պատճառները բազմազան են՝ սկսած մրցունակ ծառայությունների, աշխատանքների, ապրանքների արտադրությունից մինչև նրանց իրացում: Գյուղական բնակավայրերում արտադրված գյուղմթերքները իրացվում են շուկայականից անհամեմատ ցածր գներով: Այստեղ գերակշռում են շահութաբերության ցածր մակարդակով աչքի ընկնող գյուղմթերքների արտադրությունը. գյուղացիները դժկամությամբ են հրաժարվում ավանդական մշակություններից անցում կատարել դեպի ավելի մրցունակ մշակաբույսերի մշակության (օրինակ հացահատիկային կուլտուրաների, կաթնամթերքի, մսամթերքի արդադրությունից ավելի շահութաբեր՝ այգեգործություն, կամ ասենք ավելի պահանջարկ ունեցող և մրցունակ մշակաբույսերի մշակություն): Գյուղատնտեսության արդյունաբերականացումը և արտադրություն-վերամշակում-շուկա շղթայի լիարժեք գործարկման բացակայությունը հնարավորություն չի տալիս այդ ոլորտում ապահովել զբաղվողների եկամուտների աճ: Համայնքի գործարար հնարավորությունների <<բարոզչության>> բացակայությունը չի նպաստում օտարերկրյա ընկերությունների կամ սփյուռքահայության կողմից համայնքում ներդրումներ անելու գրավչությանը:

2) խաղաղապրոցական կրթության և արտադրոցական դաստիարակության կազմակերպման բացակայությունը

Համայնքում չկան մանկապարտեզներ, խաղահրապարակներ, որոնք լրջորեն խոչընդոտում են համայնքի առաջխաղացմանը: Համայնքի ֆինանսական հնարավորությունների դեպքում բնակավայրերին անհրաժեշտ են խաղահրապարակներ և մանկապարտեզներ:

3) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման և երիտասարդության ներգրավման բացակայությունը,

Յուրաքանչյուր համայնքի զարգացման խթան է հանդիսանում նաև սպորտը՝ որի զարգացման հնարավորությունների պարագայում կներգրավվի մեծ թվով երիտասարդների, սակայն համայնքի և ոչ մի բնակավայրում չկան մարզական կառույցներ՝ մարզադաշտ և մարզադպրոց:

4) համայնքի բնակչության սոցիալական պաշտպանվածության բացակայությունը

Համայնքում առկա է գործազրկության բարձր մակարդակ: Դիտվում նաև վերջին 3 տարիներին արտաքին տրանսֆերտների կտրուկ նվազում: Գործարար ակտիվության մակարդակը ցածր է

(տնտեսական մրցակցություն, մրցունակ արտադրանք, տնտեսաաշխարհագրական դիրք և այն): Այս հիմնական գործոններով է պայմանավորված բնակչության սոցիալական պաշտպանվածության ցածր մակարդակը:

5) համայնքի բնակավայրերի կառուցապատման, բարեկարգման և կանաչապատման, համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովման, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանման և գործունեության ապահովման ճիշտ կազմակերպման բացակայությունը.

Խոշորացված համայնքի զարգացման համար լուրջ խոչընդոտ է համայնքի բնակավայրերի բարեկարգումը, կանաչապատումը, սանիտարական մաքրումը և աղբահանության կազմակերպումը:

6) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպման, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման բացակայությունը

Խոշորացված համայնքում իսպառ բացակայում են ներհամայնքային և միջհամայնքային ուղևորափոխադրումները, որի հիմնական պատճառն այն է, որ մասնավոր ընկերությունների համար նշված ծառայությունների մատուցումը շահութաբեր չէ:

Կարևոր խնդիր է նաև ճանապարհների բարեկարգման համար անհրաժեշտ ճանապարհային տեխնիկայի ձեռքբերումը, ինչի հնարավորությունը չունի համայնքը՝ կախված բյուջեի սուղ միջոցներից:

7) գյուղական բնակավայրեր ընդգրկող Եղեգիս համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանմանը նպաստող պայմանների բացակայություն .

Գյուղական բնակավայրերում պետք է օգնություն ցուցաբերել, որպեսզի անցում կատարվի առավել մրցունակ գյուղմթերքների արտադրության: Գյուղմթերքների արտադրության մեջ դեռևս ներդրված չէ միջազգային չափանիշներին բավարարող պայմաններ, ինչը հնարավորություն կտա բարելավելու արտադրանքի որակն ու արտաքին տեսքը, բարձրացնելով մրցունակությունը:

8) զբոսաշրջային հեռանկարներ ունեցող բնակավայրերում զբոսաշրջության զարգացման ցածր մակարդակը.

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման հսկայական ներուժ, որում ընդգրկված են՝ հարուստ պատմամշակութային հուշարձաններ, նպաստավոր աշխարհագրական դիրք, բարենպաստ կլիմա, հյուրատներ, որոնք գտնվում են միջպետական և տուրիստական ուղիների խաչմերուկներում: Այս ամենով հանդերձ բացակայում է համայնքի և տուրիստական գործակալությունների փոխհամագործակցությունը, ինչպես նաև որոշ պատմամշակութային հուշարձանների մասին տեղեկատվության լուսաբանման բացակայությունը տարբեր տեղեկատվական աղբյուրներում, այդ թվում էլ եկտրոնային միջոցներով:

9) համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանման բացակայությունը,

Համայնքի հասարական կյանքին հաշմանդամների ակտիվ մասնակցությունն ապահովելու համար բացակայում է համայնքի հասարակական կյանքն ապահովող կազմակերպությունների և հաշմանդամների համագործակցությունը, ցածր է իրազեկվածության մակարդակը, համայնքում զգացվում է սոցիալական աշխատանքային խմբերի պահանջ: Անհրաժեշտ է ապահովել համայնք-սոցիալական աշխատող-հաշմանդամ շղթային կենսունակությունը:

10) **համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպման բացակայություն.**

Համայնքն ունի մտավոր մեծ ներուժ, սակայն համայնքում առկա է երիտասարդների գործազրկության բարձր մակարդակ, որի արդյունքում նրանց մեծ մասը արտագնա աշխատանքի են մեկնում մայրաքաղաք կամ արտերկիր՝ աշխատատեղերի բացակայության պատճառով:

11) **բարեգործների ներգրավվածության բացակայությունը**

Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ է ներգրավել բարեգործներ, հիմնադրամներ, ՀԿ-ներ, և նրանց հետ փոխհամագործակցելու պայմանների ստեղծել:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՀՍ) վերլուծություն

Եղեգիս համայնք

| Ուժեղ | Թույլ |
|--|---|
| <p><i>Բնական մրցակցային առավելություններ</i></p> <ul style="list-style-type: none"> • Ջրոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ և ռեսուրսներ • Բարձրագույն կրթություն ունեցող բնակիչներ • Համայնքում գործող փոքր բիզնեսներ • Ջրային ռեսուրսների առկայություն • Սաքուր բնություն • Մեղմ, տաք կլիմա • Միջպետական մայրուղին • Բնական և պատմական բազմաթիվ հուշարձաններ • Գյուղատնտեսական նշանակության մեծաքանակ հողերի առկայություն • Ինքնահոս ոռոգում • Բազմազան բույսերի և դեղաբույսերի առկայություն | <ul style="list-style-type: none"> • Համայնքի բյուջեի սեփական եկամուտների փոքր չափաբաժին • Ջրաղվածության խնդիր • Արտագաղթի բարձր մակարդակ • Հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի վատ վիճակ • Համայնքապետարանի շենքի կառուցման անհրաժեշտություն • Համայնքային ենթակայության կառույցների վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն • Գործազրկության բարձր մակարդակ • Աղքատության բարձր շեմ • Բնակչության ցածր կենսամակարդակ • Միջհամայնքային և ներհամայնքային |

| | |
|---|--|
| <p><i>Մասնագիտական, մարդկային մրցակցային առավելություններ</i></p> | <p>տրանսպորտի բացակայություն</p> <ul style="list-style-type: none"> • Ժամանցի սահմանափակ հնարավորություն • Ֆինանսական այլընտրանքային միջոցների բացակայություն • Մշակութային շինությունների բացակայություն և ոչ բարվոք վիճակ: |
| <ul style="list-style-type: none"> • Տեխնոլոգներ • Գործարար ունակություններով մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Մեղվաբուծության բարձրորակ մասնագետներ • Բարձրագույն կրթություն ունեցող մարդկանց մեծ տեսակարար կշիռ • Տուրիզմի բարձրորակ մասնագետներ • Գյուղատնտեսներ | |
| <p>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ</p> | <p>ՄՊԱՌՆԱԼԻՔ</p> |
| <ul style="list-style-type: none"> • Գյուղ նշանակության հողերի առկայություն • Զբային ռեսուրսների առկայություն • Մեղվաբուծություն • Այգեգործության համար նպաստավոր պայմաններ • Անասնապահություն • Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր • ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ • Համագործակցության շրջանակների ընդլայնում | <ul style="list-style-type: none"> • Գործազրկության բարձր մակարդակ • Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվ • Ներդրումների անբավարար մակարդակ • Բնակչության արտագաղթի մեծ տոկոս • Ուղեղների արտահոսք • Ֆինանսական այլընտրանքային միջոցների ռեսուրսների բացակայություն • Սոցիալ-տնտեսական ընդհանուր իրավիճակի վատթարացում |

Բն. Շատին

| Ուժեղ | Թույլ |
|--|--|
